Օշնակ եւ Օշնակ–բերդ[1], Ճալա, Իծաձոր, Խնգեմեկ, Զամբերքան, Մարաշ[2], Իրիս–բերդ[3], Փէտէգրէկ, Սակուտ եւ Դորդիլիլիսայի[4], առ–ները, որոնք բոլորն էլ անցնում են համանուն գեղերի մօտից, ոռոգում են հանդերը, ախոռները, մացրաները, եայ–

---

[1] Օշնակ բերդը իր հռչակաւոր ամրոցներով, գղեակներով եւ կործանուած տաճարներով վկայում է իր դարեւոր պատմական անցեալը, երբ Նա իշխել է բերդին եւ երկրին։ Բերդը շինուած է ճորոխի ափին, Բէջիգին լեռների վերջին շերտերի գլխին, որն հսկում է ձորին դէպի արեւելք եւ դէպի արեւմուտք։ Կարնոյ դաշտի Օձունը, Լոռու Օձունը, Էջմիածնի Օշկանը, նոյն իսկ Սպերի եւ Բալախոռի Օձուտ, Օձաեղ, Օշք, Օշկաձոր անուանները ցոյց են տալիս Օձերի (Վիշապազանց) պաշտամունքի շրջանը. երբ շճակների մէջ, ճահիճների շուրջը Վիշապական արձաններ էին կանգնեցնում։ Այս բերդը ջրաբաշխ կամ ջրպետ պաշտօնէի եւ իշխանի ամրոց լինելը եւ Նրա իշխանութեան տարածման վկայարանն է։

2 Մարաշի անունը յիշեցնում է հին Մարաշ (Մարկաշը) Հիտտերի (Հաթթերի), Կոմմագէնի եւ Կիլիկիայի մէջ։ Սա իր աւերակներով եւ անցեալով ցոյց է տալիս, որ ինքն էլ Մարաշի փայլուն շրջանում Նրա զուգակից, առնուանակից եւ մրցակիցն է եղել։

3 Իրիս-բերդը Կոջէթ բերդի դէմ ու դէմն է, լերան ներքին փէշերին մի բարձունքի վրայ, ունի միջնաբերդ, ամրոցներ, գղեակ եւ բարձր դիրք։ Կործանուած են որմերը՝ շէնքերը, մերկ պատերը բարձր կանգնած են։ Շէնքի հարաւ-արեւելեան պատերը զննում են ճորոխին. հիւսիս-արեւմտեան որմերը եւ շէնքերը լեռների ստորոտի վերջին բարձունքներին են յառած։

4 Դորդ-քիլիսէ պարզ թրքական թարգմանութիւնն է — Զորս տաճարներ, որոնք գտնուում են, Լազուառ.ի դիմաց, իրար մօտ, սրբատաշ կարծր քարերով. ճարտարապետական ընտիր ոճով եւ քանդակներով։ Միջնադարեան կառուցուածք է, հեթանոսական տաճարների հիմք ունի։